
ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ





- ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2025 թվականի հուլիսի 1-ի նիստում քննարկվեցին բնական գազի փոխադրման, գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման և բնական գազի բաշխման սակագների սահմանման մասին հարցերը և սահմանվեցին հետևյալ սակագները՝ յուրաքանչյուր հազար խորանարդ մետրի համար (առանց ԱԱՀ-ի)՝
  - բնական գազի փոխադրման սակագինը՝ 9099.354 դրամ՝ մինչ այդ գործող 8229.741 դրամի փոխարեն,
  - գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման սակագինը՝ 23.533 դրամ խմ՝ մինչ այդ գործող 24.042 դրամի փոխարեն,
  - բնական գազի բաշխման սակագինը՝ 14989.73 դրամ՝ մինչ այդ գործող 19664.779 դրամի փոխարեն:
- Հաշվի առնելով գազամատակարարման համակարգի կարգավորվող սակագների վրա ազդող դրական և բացասական բոլոր գործոնները՝ վերջնական սպառողներին վաճառվող բնական գազի սակագների վերանայման անհրաժեշտություն չի առաջացել և դրանք մնացել են անփոփոխ:
- Սահմանված սակագներն ուժի մեջ են մտնում 2025 թվականի օգոստոսի 1-ից:



Սակագների վրա ազդող հիմնական գործոնները

N	Գործոններ	Ազդեցության չափը
1.	2025 թվականի օգոստոսի 1-ից սկսվող 5-ամյա ժամանակահատվածի համար ամրագրված թիրախային ցուցանիշներ, այդ թվում՝	*- 2490.8 մլն դ*
-	*գազամատակարարման համակարգի կորուստներ* ***(3.9%՝ 5.07%-ի փոխարեն)***	*- 1936.8 մլն դ*
-	*նորոգման և նյութական ծախսեր*	*- 543.4 մլն դ*
-	*աշխատանքի վճարման ծախսեր*	*+ 21.7 մլն դ*
-	*այլ շահագործման և պահպանման ծախսեր*	*+ 45.0 մլն դ*
-	*անհուսալի դեբիտորական պարտքեր*	*- 77.3 մլն դ*
2.	Ներկրման և սպառման ծավալի, սպառման կառուցվածքի և գազի ջերմարարության փոփոխություն	*+ 5761.0 մլն դ*
3.	Այլ գործոնային փոփոխություններ	*- 3270.2 մլն դ*
	ԸՆԴԱՄԵՆԸ (ազդեցությունը սպառողի սակագնի վրա)	**0 դ**



Գազամատակարարման համակարգում մատուցվող ծառայությունների սակագները (առանց ԱԱՀ-ի)

№	Անվանումներ	Չափի միավոր	Սակագին (01.08.2024-31.07.2025)	Սակագին (01.08.2025-31.07.2026)
1	Բնական գազի փոխադրման սակագին	*դրամ/ հազ. խմ*	8 229.741	9 099.354
2	Գազամատակարարման համակարգի օպերատորի ծառայության մատուցման սակագինը	*դրամ/ հազ. խմ*	24.042	23.533
3	Բնական գազի բաշխման սակագինը	*դրամ/ հազ. խմ*	19 664.779	14 989.73

